ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

14 ՀՈՒՆԻՍԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Ալիխան Համեյանը, Ջամալ Միրզոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ջասմ Մախմուդովը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վազիր Ավդալյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 14-ի N 5 հերթական նիստի օրակարգը.

1.Ալագյազ համայնքի Ճարճակիս վարչական բնակավայրի գազաֆիկացման աշխատանքների համար գումար հատկացնելու մասին,

2.Ալագյազ համայնքի Ճարճակիս վարչական բնակավայրի գազաֆիկացման աշխատանքների հեղինակային հսկողության համար գումար հատկացնելու մասին,

3.Ալագյազ համայնքի Ճարճակիս վարչական բնակավայրի գազաֆիկացման աշխատանքների տեխնիկական հսկողության համար գումար հատկացնելու մասին,

4.Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության ցանցի վերանորոգման համար գումար հատկացնելու մասին,

5.ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու 2024 թվականի ծրագրային հայտերը հաստատելու մասին,

6.Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող Ջամշլու վարչական բնակավայրի գլխավոր փողոցում գտնվող գիշերային լուսավորության լուսատուները ձախ հատվածից աջ հատված տեղափոխելու մասին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39/

Լսեցին

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՐՃԱԿԻՍ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N50 որոշումը և միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 26-ի արձանագրությունը, որտեղ համայնքի մասնաբաժինը հաստատվել է 40 տոկոսով, ինչպես նաև Ալագյազի համայնքապետարանի և «Լայն Շին» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի մայիսի 10-ին կնքված ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԲՄԱԾՁԲ-23/01 պայմանագիրը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի «Ալագյազ բնական գազ» ծրագրի 5112 (շենք շինությունների կառուցում) հոդվածից 31.200.000 (երեսունմեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ փոխանցել «Լայն Շին» ՍՊԸ-ին, որպես Ալագյազ համայնքի Ճարճակիս վարչական բնակավայրի գազաֆիկացման աշխատանքների գումար՝ համայնքի մասնաբաժին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40/

Լսեցին

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՐՃԱԿԻՍ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N50 որոշումը և միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 26-ի արձանագրությունը, որտեղ համայնքի մասնաբաժինը հաստատվել է 40 տոկոսով, ինչպես նաև Ալագյազի համայնքապետարանի և «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի մայիսի 10-ին կնքված ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՄԱԾՁԲ-Հ-23/01 պայմանագիրը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի «Ալագյազ բնական գազ» ծրագրի 5112 (շենք շինությունների կառուցում) հոդվածից 239.284 (երկու հարյուր երեսունինը հազար երկու հարյուր ութանասունչորս) ՀՀ դրամ փոխանցել «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ին, որպես Ալագյազ համայնքի Ճարճակիս վարչական բնակավայրի գազաֆիկացման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության գումար՝ համայնքի մասնաբաժին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41/

Լսեցին

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՐՃԱԿԻՍ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N50 որոշումը և միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 26-ի արձանագրությունը, որտեղ համայնքի մասնաբաժինը հաստատվել է 40 տոկոսով, ինչպես նաև Ալագյազի համայնքապետարանի և «Վահրամ Կնյազյան» ԱՁ-ի միջև 2023 թվականի մայիսի 24-ին կնքված ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԾՁԲ-23/04 պայմանագիրը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

…յլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի «Ալագյազ բնական գազ» ծրագրի …4 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 120.000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ փոխանցել «Վահրամ Կնյազյան» ԱՁ-ին, որպես Ալագյազ համայնքի Ճարճակիս վարչական բնակավայրի գազաֆիկացման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության գումար՝ համայնքի մասնաբաժին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42/

Լսեցին

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 89-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ղեկավարի 2023թվականի հունիսի 6-ի N28 որոշումով ստեղծված հանձնաժողովի արձանագրությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել Ալագյազ համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2023թվականի բյուջեի «Փողոցների լուսավորության» ծրագրի 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածից մինչև 950000 (ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ օգտագործել Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող թվով 100 լուսատուների վերանորոգման և ըստ անհրաժեշտության նորով փոխարինելու համար:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43/

Լսեցին

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՊԱՊԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու 2024 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրին մասնակցելու հետևյալ հայտերը.
1.Ալագյազ համայնքի Ալագյազ բնակավայրի խմելու ջրի ջրագծի կառուցում, Միրաք և Ռյա-Թազա վարչական բնակավայրի խմելու ջրի ջրագծի վերանորոգում,
2.Ալագյազ համայնքի Ալագյազ, Ճարճակիս, Միրաք, Ջամշլու, Կանիաշիր և Ավշեն վարչական բնակավայրերի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում,
3.Ալագյազ համայնքի Ճարճակիս բնակավայրի գերեզմանատների ցանկապատում,
4.Ալագյազ համայնքի Ալագյազ, Ջամշլու, Ռյա Թազա, Կանիաշիր և Սադունց վարչական բնակավայրերում կանգառների կառուցում:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44/

Լսեցին

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԱՄՇԼՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԸ ՁԱԽ ՀԱՏՎԱԾԻՑ ԱՋ ՀԱՏՎԱԾ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

.ելակավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ջամշլու վարչական բնակավայրի գլխավոր փողոցում գնվող լուսավորության լուսատուները հիմնականում լուսավորում են բնակավայրի հակառակ կողմը և տեղափոխելու արդյունքում բնակավայրի մեծ մասը կլուսավորվի, ինչպես նաև Ջամշլու վարչական բնակավայրի բնակիչների բանավոր առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող և Ջամշլու վարչական բնակավայրի գլխավոր փողոցի ձախ հատվածում գտնվող թվով 25 գիշերային լուսավորության լուսատուները տեղափոխել աջ հատված:
2.Տեղափոխման աշխատանքների կատարումը թողնել Ջամշլու վարչական բնակավայրի բնակիչների և աշխատողների վրա:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45/

Ավագանու անդամներ

ՖԱՅԶՈ ԱԼԻՅԱՆ

ՋԱԼԻԼ ԽՈՒԴՈՅԱՆ

ՄԱՐԱՏ ԿՆՅԱԶՅԱՆ

ՌԵԶՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ

ՍԵՐԺԻԿ ՄՈՒՐԱԴՈՎ

ԱՆԶՈՐ ՇԱԲՈՅԱՆ

ՇԻՐԱԼԻ ՉՈԼՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

Նիստն արձանագրեց՝ Վազիր Ավդալյանը